# ՀԱՍԿԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

# ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

N 3 (2012-2013)

# HASKER. A YEARBOOK OF CHILDREN’S LITERATURE AND FOLKLORE

N 3 (2012-2013)

# АСКЕР: ЕЖЕГОДНИК ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ И ФОЛЬКЛОРА

N 3 (2012-2013)

## ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

## ABSTRACTS

## РЕЗЮМЕ

Արմեն Սարգսյան

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

### ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Մանկական բանահյուսությունը կենցաղավարում է առանձնահատուկ միջավայրում՝ մանկաշխարհում: Հոդվածում քննվում են հաշվերգեր, բառախաղեր, խաղերգեր ու ծաղրերգեր, շուտասելուկներ և այլն: Մանկական բանահյուսության այս նմուշները բաժանվել են խմբերի ըստ կառուցվածքային, իմաստաբանական և կիրառական առանձնահատկությունների: Հայ մանկական բանահյուսության բազմակողմանի ուսումնասիրությունը արժեքավոր է բանահյուսական ժառանգության ամբողջական գնահատման և մանուկների հոգեբանության, մտածողության և կարողությունների մասին պատկերացում կազմելու տեսանկյունից:

***Բանալի բառեր՝*** *մանկական բանահյուսություն, հայկական բանահյուսություն, բանահյուսական ժառանգություն, մանկաշխարհ, հաշվերգ, բառախաղ, խաղերգ, ծաղրերգ, շուտասելուկ, արխիվային նյութեր, մանկական ընկալում*

Armen Sargsyan

*Institute of Archaeology and Ethnography, Yerevan*

**ON ARMENIAN CHILDREN'S FOLKLORE**

The paper examines a body of nursery texts: children's rhymes, counting rhymes and tongue twisters coming from different parts of Armenia. An attempt is made to group them according to their unique structural, semantic and functional characteristics. The publication of yet unrecorded and lesser-known variants will doubtless encourage further study by scholars interested in this delightful and unique heritage.

*Key words: children's folklore, Armenian folklore, folk heritage, nursery, counting rhymes, puns, nursery rhymes, tongue twisters, archival materials, child conception*

Армен Саргсян

*Институт археологии и этнографии, НАН РА*

ОБ АРМЯНСКОМ ДЕТСКОМ ФОЛЬКЛОРЕ

Статья рассматривает особенности детских фольклорных произведений – стишков, считалок, скороговорок и т.д. из разных регионов Армении. Сделана попытка систематизировать их в соответствии со структурными, семантическими и функциональными признаками. Исследование неопубликованных архивных текстов и личных фондов поможет более целостной оценке фольклорного наследия, а также выявлению особенностей детского восприятия окружающего мира и места ребенка в нем.

***Ключевые слова:*** *детский фольклор, армянский фольклор, фольклорное наследие, детские стишки, считалки, скороговорки, дразнилки, архивные материалы, детское восприятие*

Սերգեյ Վարդանյան

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

# ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ներկայացված են կրոնափոխ համշենահայերի մանկական բանահյուսական ստեղծագործությունները՝ հանելուկներ, մանկական խաղերգեր, մատնախաղ: Բռնի իսլամացված համշենահայերի բանահյուսությունը շատ քիչ է ուսումնասիրված: Բերված նյութերի հեռու ու մոտ տարբերակները 19-20-րդ դարերում գրառվել են Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում, ինչը վկայում է, որ բռնի կրոնափոխված համշենահայերի բանավոր ստեղծագործությունները հայկական բանահյուսական ժառանգության անբաժանելի մասն են:

***Բանալի բառեր՝*** *համշենահայեր, բռնի իսլամացված, մանկական բանահյուսություն, թարգմանություն, բանահյուսական ժառանգություն, հանելուկներ, մանկական խաղերգ, մատնախաղ, դաշտային բանահյուսական նյութեր, հայկական բանահյուսություն*

Sergey Vardanyan

*Institute of Archaeology and Ethnography, Yerevan*

# SAMPLES FROM CHILDREN'S FOLKLORE OF HAMSHEN ARMENIANS FORCIBLY CONVERTED TO ISLAM

This brief article presents newly recorded samples from children's folklore of Hamshen Armenians converted to Islam by force. The folklore instances include nursery rhymes, counting rhymes and riddles. As the Armenian idiom of Hamshen Armenians is quite distinct, parallel translations into modern literary Armenian are given.

*Key words: Hamshen Armenians, forcible conversion, children's folklore, translation, folk heritage, riddle, finger play, field research, Armenian folklore.*

Сергей Варданян

*Институт археологии и этнографии, НАН РА*

ДЕТСКОЕ ФОЛЬКЛОРНОЕ НАСЛЕДИЕ АМШЕНСКИХ АРМЯН ПРИНУДИТЕЛЬНО ПРИНЯВШИХ ИСЛАМ

В статье представлены образцы из детского фольклора амшенских армян, принудительно принявших ислам. Детское фольклорное наследие амшенских армян включает детские стишки, считалки и загадки. Параллельный перевод данных текстов на современный армянский язык демонстрирует очевидную близость представленного материала с фольклорными аналогами из других этнографических регионов Армении. Исследования доказывают, что амшенская фольклорная традиция является частью общеармянского фольклорного наследия.

***Ключевые слова:*** *амшенские армяне, принудительное обращение в ислам, детский фольклор, перевод, фольклорное наследие, стишки, считалки, загадки, игры с пальцами, полевые материалы, армянский фольклор.*

Ալվարդ Ջիվանյան

*Երևանի պետական համալսարան*

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոդվածում թարգմանական հեքիաթ եզրը կիրառվում է բառիս ամենալայն իմաստով՝ ընդգրկելով ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված թարգմանություններ, փոխադրություններ և վերապատումներ, որոնք առանձնանում են բնագիր տեքստից հեռացվածության տարբեր աստիճաններով: Հայ թարգմանական հեքիաթն ունի շատ հին պատմություն, և նրա ձևավորման փուլը կարելի է պայմանականորեն համարել X դ., երբ առաջին անգամ թարգմանվեց «Պղնձե քաղաքի պատմությունը»: Հայ թարգմանական հեքիաթի աշխարհագրությունը ներառում է Վիեննան, Մոսկվան, Թիֆլիսը, Հալեպը, Կոստանդնուպոլիսը… Սեղմ անդրադարձել ենք նաև հայկական հեքիաթի այլալեզու թարգմանություններին:

*Բանալի բառեր՝ հրաշապատում հեքիաթ, հեղինակային հեքիաթ, թարգմանական հեքիաթ,*

*միջնորդավորված թարգմանություն, թարգմանության պատմություն, փոխադրություն, վերապատում, հեքիաթի աշխարհագրություն:*

Alvard Jivanyan

*Yerevan State University*

THE ARMENIAN TRANSLATED FAIRY TALE

The article focuses on the periodization and historical evolution of Armenian translations of fairy tales, which begin roughly in the 10th century with one of the earliest renderings of *The Story of the Brass City*. Our understanding of the translated fairy tale is broad and includes direct translations from the source language, mediated translations, retellings and adapted versions. The distinctive aspect of Armenian translations of fairy tales is that numerous volumes of translated tales have been published beyond Armenia in Vienna, Moscow, St Petersburg, Aleppo, Constantinople, Tiflis and elsewhere.

***Key words:*** *fairy tale, literary tale, translated tale, mediated translation, history of translation, retelling, adaptation, geography of the fairy tale.*

Алвард Дживанян

*Ереванский государственный университет*

АРМЯНСКАЯ ПЕРЕВОДНАЯ СКАЗКА

В статье подробно представляется периодизация переводов волшебных сказок на армянский язык, которая началась ориентировочно в X веке и продолжается до наших дней. В работе понятие переводной сказки понимается довольно широко и включает опосредованные переводы, пересказы и адаптации. География переводов сказок на армянский язык включает Вену, Москву, Санкт-Петербург, Алеппо, Константинополь, Тифлис ... Важным аспектом для данного исследования является рассмотрение переводов армянских сказок на другие языки.

***Ключевые слова:*** *переводная сказка, историческая эволюция сказки, волшебная сказка, литературная сказка, опосредованный перевод, пересказ, адаптация, география сказки.*

Արմեն Պետրոսյան

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՎԱՐՏ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ներկայացված են մանկական բանահյուսության մեջ շատ քիչ ուսումնասիրված, համեմատաբար ուշ շրջանների նմուշներ: Ի տարբերություն հին, արխայիկ, հատկապես ազգագրական արժեք ունեցող նմուշների, այս նյութերը ուսումնասիրվում են հաշվի առնելով մանկական մտածողության առանձնահատկությունները: Ուշագրավ են այլալեզու շերտ պարունակող օրինակները, որոնց մեկնությունը պահանջում է փոխառնված նյութի խոր իմացություն:

***Բանալի բառեր***` *մանկական բանահյուսություն, հայկական բանահյուսություն, բանահյուսական ժառանգություն, մանկաշխարհ, հաշվերգ, այլալեզու բառեր, նորագույն շրջան, խորհրդային շրջան, դպրոցական բանահյուսություն:*

Armen Petrosyan

*Institute of Archaeology and Ethnography, Yerevan*

MODERN LORE OF ARMENIAN SCHOOLCHILDREN:

AN INCOMPLETE HUMOROUS STUDY

This brief presentation deals with a series of relatively new Armenian counting rhymes. Although popular in the playground, in school environment and remarkably consistent from school to school, these jewels of nursery lore have hardly ever become objects of folkloristic study, which has mainly focused on traditional culture of child population.

*Key words: children’s folklore, Armenian folklore, folk heritage, counting rhymes, foreign elements, newest period, Soviet period, school lore.*

Армен Петросян

*Институт археологии и этнографии, НАН РА*

НОВЕЙШИЙ ДЕТСКИЙ ФОЛЬКЛОР: НЕЗАВЕРШЕННОЕ

ЮМОРИСТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

Статья исследует ряд армянских считалок сравнительно новейшего периода, которые достаточно популярны среди детей и в школе и во дворе, однако ранее не подвергались фольклорному исследованию, а рассматривалась как часть детской традиционной культуры. В статье сделана попытка интерпретации детских считалок, несущих в себе иноязычные элементы, декодирование которых требует глубоких знаний исходных материалов и особенностей детского восприятия.

***Ключевые слова:*** *детский фольклор, армянский фольклор, фольклорное наследие, детские стишки, считалки, новейший период, советский период, иноязычные элементы, школьный фольклор.*

Անի Եղիազարյան

*Հովհ. Թումանյանի թանգարան*

«ԼՈՒՍԱԲԵՐ» ԴԱՍԱԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քսաներորդ դարի սկզբին հայ մտավորականության այնպիսի մեծեր ինչպիսիք են Ստեփան Լիսիցյանը, Հովհ. Թումանյանը և Լեոն Շանթը, գիտակցելով լավ դասագրքի կարևորությունն ու անհրաժեշտությունը, ձեռնամուխ են լինում նոր դասագրքի կազմման աշխատանքներին: 1907 թ. հրատարակվում է «Լուսաբեր» դասագրքի առաջին օրինակը, որը նախատեսված էր որպես «Այբբենարան և առաջին ընթերցարան»: Իր մտածված ու պատճառաբանված կառուցվածքի շնորհիվ հետագայում «Լուսաբերը» լայն տարածում է գտնում ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև Կ.Պոլսում, Ռուսաստանի հայաբնակ վայրերում և սփյուռքում:
***Բանալի բառեր՝*** *Այբբենարան, ընթերցարան, դասագիրք, մանկավարժություն, արևելահայերեն, արևմտահայերեն, թարգմանություն, նկարազարդում, լուսավորություն, սփյուռք:*

Ani Yeghiazaryan
*Hovh. Toumanian Museum*

ON THE HISTORY OF A SCHOOLBOOK

The intellectual elite of the Armenian society had always realized the major role of alphabet books and primers in the education and psychological growth of children. At the start of the 20th century many celebrated figures of Armenian intellectual history began to actively take part in the educational movement and publication of qualified schoolbooks meeting the requirements of child education of the time: Stepan Lisitsian, Hovhannes Toumanian and Levon Shant were among them. *Lusaber* (meaning a book that brings light), the multi-volume schoolbook they compiled, was truly enlightening and made the process of child education more enjoyable and rational.

*Key words: Alphabet, reader, textbook, pedagogy, Eastern Armenian, Western Armenian, translation, illustration, enlightenment, Diaspora.*

Ани Егиазарян
*Музей Ованеса Туманяна*

ИСТОРИЯ СОЗДАНИЯ УЧЕБНИКА «ЛУСАБЕР»

Интеллектуальная элита армянского общества осознавала огромную роль азбуки и букваря в деле просвещения и психологического роста детей. В начале XX века многие выдающиеся деятели Армении стали участниками просветительского движения и занялись созданием компетентных учебников, которые бы соответствовали требованиям детского образования и воспитания того времени. Среди них Степан Лисицян, Оганес Туманян и Левон Шант. Лусабер (в переводе “приносящий свет”) – многотомный учебник, который действительно просвещал детей делая обучение приятным и рациональным.

***Ключевые слова:*** *азбука, букварь, учебник, педагогика, восточноармянский язык, западноармянский язык, перевод, иллюстрация, просвещение, Диаспора.*

Лусине Товмасян

*Арцахский гос. университет*

ПРОЯВЛЕНИЕ ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТИ НА СТИЛИСТИЧЕСКОМ УРОВНЕ В СКАЗКАХ ЛЬЮИСА КЭРРОЛЛА

Являясь существенным источником текстообразования, интертекстуальность находит свое отражение на всех уровнях организации текста, включая стилистический и тропологический. Интертекстуальное тропологическое исследование сказок об Алисе Льюиса Кэрролла выявляет интересные параллели с фольклорными текстами. Статья рассматривает нейтрализацию тропов, как особое качество текста сказки. В следствии этого в сказочном тексте оперируют такие специфические тропы как псевдогипербола, псевдолитота, и псевдометонимия.

***Ключевые слова:*** *интертекстуальность, литературная сказка, фольклорная сказка, тропы, стилистика, нейтрализация, псевдогипербола, псевдолитота, псевдометонимия*

Lussine Tovmassian

*Artsakh State University*

INTERTEXTUALITY OF TROPES IN LEWIS CARROLL'S *ALICE TALES*

The article is devoted to the intertextual tropological reading of Lewis Carroll's *Alice Tales*. Hyperbole, litotes, metamorphosis and metonymy stand out as major tropes in both Carroll's tales and in fairy tales of folk origin. An important stylistic feature of the fairy tale is its tendency to neutralize tropes at the expense of the intentional enlivening of their worn, hackneyed semantics.  This process results in the shaping of specific fantasy tropes: pseudohyperbole, pseudolitotes, and pseudometonymy.

Լուսինե Թովմասյան

*Արցախի պետական համալսարան*

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ԼՈՒԻՍ ՔԵՐՈԼԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Հեքիաթի տեքստում միջտեքստայնությունը դրսևորվում է տարբեր մակարդակներում: Հոդվածում ներկայացված են Լուիս Քերոլի հեքիաթների միջտեքստային զուգահեռները բանահյուսական հեքիաթների տեքստերի հետ: Մանրամասն քննության են ենթարկվում այնպիսի ոճահնարային առանձնահատկություններ, որոնք հատուկ են միայն հեքիաթի ժանրին: Ուսումնասիրությունը ի հայտ է բերում ոճահնարային համակարգի նոր դրսևորումներ՝ կեղծ չափազանցություն, կեղծ նվազաբանություն և կեղծ փոխանունություն:

***Բանալի բառեր***՝ *միջտեքստայնություն, գրական հեքիաթ, ժողովրդական հեքիաթ, ոճահնար, ոճագիտություն, չեզոքացում, կեղծ չափազանցություն, կեղծ նվազաբանություն, կեղծ փոխանունություն*